

Հազարը, Քրիստոս 401 տարի առաջ, կը ու-
զելով՝ Հայաստանի մեջին անցան, և Հու-
նաց մեծն Աղեքսանդրը ներմուծեց զայն
արևմտյան քաղաքակրթության գլխավոր
հոսանքին մեջ, երբ ան նվաճեց այս նահան-
դը պարսկական կայսրութեան՝ Քրիստոսից
331 տարի առաջ Առաջին դարեն սկսյալ՝
նախ քան Քրիստոս, հաղթողներու հաղթող
Հոռմայեցիները ընդմշաբար տիրեցին Հա-
յաստանի գինուց զրությամբ, թեև ազա-
տասեր Հայերը իրենց ամենամեծ զրության
շրջաններուն կրցան անկախ թագավորու-
թյուն մը պահել, որ երբեմն տարածվեցավ
Սև ծովին մինչև Կասպից ծով։

Քրիստոսի 303 թվականին, Հայաստան
անցուց լուրջ դարաշրջան մը, երբ առաջին
ազգը հանդիսացավ պատմության մեջ, որ
ընդունեց քրիստոնեությունը իրեւ պետա-
կան կրոն։ Հոռմեական կայսրությունը շու-
տով հետևեցավ անոր, բայց նույն դարուն
վերջը հայկական Եկեղեցին խզեց իր կապե-
րը ուղղափառ Եկեղեցին հետ և մինչև այ-
սօր կմնա ինքնավար քրիստոնեական Եկե-
ղեցի մը։ Քրիստոնեության շրջանին դարե-
րով տառապող Հայերը պատերազմեցան
ասպատակիչներու հաջորդական ալիքներուն
դեմ։

1926-ին մինչև 1939 Հայաստանի Խ. Ս.
Հանրապետության բնակչությունը ավելա-
ռած է ավելի քան 45 առ հարյուր, շափա-
նիշ, որ ավելի բարձր է քան Միության ու-
րիշ որևէ հանրապետության աճումը։ Երե-
վան, որ այսօր կճանցվի հայկական մշա-
կութիւն կեդրոնը, 1914 թվականի 29.000
բնակչութենեն 1937-ին բարձրացած էր
150.000-ի։

Այս քաղաքը կներկայացնե Խ. Ս. Հան-
րապետությանց Միության ամենեն ընտիր
և արդիական ճարտարապետության ծաղ-
կումի տեսարանը։ Նոր շինություններն
շատերը կառուցված են Հայաստանի հատ-
կանական վարդագույն փիլորաքրեն (տուֆ),
որ հաճելի է աշքերու։ Կարելի է սղոցել
դայն դանաղան ձևերով, և ավելի թեթև է,
բայց նույն ատեն ամեն ամելի գորավոր սովորա-
կան քարեն կամ կղմինտերնե։

Հայ մը, որուն անունը հաճախ կհիշա-
տակի սովետ պատերազմական հաղորդա-

գրությանց մեջ, Կարմիր Բանակի զորավար
Հովհաննես Բաղրամյանն է։ Հայաստանի ա-
կանակոր ուրիշ բնիկ հայ մըն է Կարս Ս.
Հալապյանը, որ նյութորքի համաշխարհա-
յին ցուցահանդեսի սովետ հոյակապ տա-
ղավարի գործակից ճարտարապետը և Ստա-
լինի կրատի վերակառուցման ճարտարապետ-
ներու հանձնաժողովի պետն է։

Վրաստանի նման, Հայաստան գերազան-
ցողին երկրագործական երկիր մըն էր ա-
ռաջին համաշխարհային պատերազմեն ա-
ռաջ, բայց անկե ի վեր ճարտարարվեստա-
կան կարեւոր զարգացման հասած է. անոր
տնտեսության, ճարտարարվեստական ար-
տադրության համեմատությունը բարձրա-
ցած է 21,7 առ հարյուրեն մինչև 71,6 առ
հարյուր՝ 1913-ի և 1937-ի միջև։ Զուգըն-
թացարը իր երկրագործությունը ամբող-
ջովին արդիականացած է։ Բամբակի դաշ-
տերը, այգիները, մրգաստանները, ծխախո-
տի մշակավայրերը և արշարաբուժարաննե-
րը կազմակերպված են հավաքական հիմե-
րու վրա։ Երկրագործական արտադրությունը
շրջագիր կերպուն ավելացած է ոռոգման միծ
ձեռնարկություններով։

Ասոնցմե ամենեն տպավորիչը այն ծրա-
գիրն է, որ ի գործ կդրվի օգտագործելու
համար Սևան լճի հոսանքը, որ աշխարհի
ամենեն մեծ և ամենեն գեղեցիկ լեռնային
բարձր լիճներն մեկն է։ Անոր հյուահսային
անկան վրա հրաբինալին լքված կղզեկի մը
մեջ կրարձրանա հայկական հին վանք մը,
որ կառուցված է ավելի քան 1.500 տարի-
ներ առաջ։ Մրագրված է օգտագործել Սևա-
նա լճի ջրին մեկ մասը, որմե տարեկան
300.000 կալոն կղոփիանա, բնդարձակելու
նպատակով։ Զանգու գետի ծավալը, և ատ-
պիսով աստիճանաբար և ճշգրտորեն համա-
սպակշունչու լճի գուղղիացումը և անոր
ջրահին պարունակությունը։

Զանգու գետի առագ հոսանքը ուժ կմա-
տակարարե ջրաէլեկտրական միծ հաստա-
տությանց համար, որոնցմե մեկը առդեն
նշանակու ուրծած է կրաքանչով։ Համադրա-
կան ձգախեժ արտադրելուն համար

ՔՈՐԼԻՍ ԱԱՄՈՒԹ

«Սովետ Ռազիա Թուտեա»-ին
(«Նոր օր» վեարվ. 9 1946 թ. Ֆրեզեն)

ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՑ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՀԱՄԱՐ

«Ա. ՊՈՒՐՍ ԷԺԻԲՍԻԵՆ» իր 22 դեկտ. թվին
մեջ վերեի խորագրով Հայոց համար հա-
մակրակից և արդարակորով խմբագրական
մը հրատարակած էր փր խմբագրապետ Պ.

Ժան լյուկով ստորագրության տակ Ահա-
վասիկ ամբողջական թագումանությունը։

Մեր համակրանքին արժանանալու այն-
քան պատճառներ ունեցող ազգի մը երկար

ու վշտալի պատմությունը արդյոք պիտի փակվի՝ վերջապես։ Հայերը— որոնց աստվածաշնչական ծագմամբ անունը՝ Արամ Կհիշեցնե հնագույն դարերը— պիտի կարենա՞ն վերջապես համախմբվիլ և խաղաղությամբ ապրիլ հայրենի հողին վրա։ Այս հարցերը, և շատ ուրիշ հարցեր ալ, կրնանք ուղղել մենք մեզի այն պահուն՝ երր հորդաբային Միությունը կշանա երևանի Սովետական հանրապետություններու մեջ հավաքել սիյուռքի հայերը։ Ըստ կարգ մը թվերու 1.400.000 հայեր հաստատված են բուն իսկ Հայաստանի մեջ, 800.000 Կովկասի և սովետական զանազան հանրապետություններու մեջ և շուրջ 800.000 աշխարհի մնացյալ մասին մեջ։

Այս արևելյան ժողովրդին մարտիրոսությունը ծանոթ է։ Համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին ան կդժնվեր ուսու և թուրք ռազմաբեմին վրա։ Հուսահատ, Օսմանյան կայսրությունը, որուն գեշ խրատներ ամփին գերման զորավարները, ծեռնարկեց պարպելու այդ հեռավոր նահանգներու բնակչությունները։ Տեղահանությունը, սպանություններու և զրկանքներու հետ միասին, սարսափելի եղավ։ ըստ հայկական աղբյուրներու՝ մեկ միլիոն ավելի զոհեր եղան այդ ժամանակ։ 1918-ի դաշնակից հաղթանակեն ետք ֆրանսական զորքեր գրավեցին Կիլիկիան, որը հետո ստիպվեցան թողուկ Մուստաֆա Քեմալի հետ համաձաւնելի վերը։ Յրանսա Սուրբու և Լիբանանի մեջ տեղավորեց շուրջ 200.000 գաղթականներ, որոնք հաստատվեցան հոգատառության ենթակա այդ երկրներու մեջ։ Մեծն Բրիտանիա անոնց առջև բացավ Կիպրոսը, Պաղեստինը, Սուլդանը Խելացի, Համառ աշխատանք, սակավապես ցեղ— ինչպես հալածված բոլոր ժողովուրդները— այդ հայերը շուտով իրենց համար ստեղծեցին նոր և հարաբերաբար խաղաղ կյանք մունքներ ի վեր օհի խոսվեցավ իրենց մասին։

Վերջերս միայն, երբ աշխարհը հանկարծ վերհիշեց թուրք և սովետական դրաշիռթունը, հայկական հարցը երևան եեավ։ Անիկա երկու երկութիւննի՝ ազգաբնակչական և հողային։ Մեկ կողմէ՝ Հայաստանի սովետական հանրապետությունը կուգե զորացնել իր մարդկային կարողությունը իրեն կանչելով սիյուռքի բոլոր գաղութները, և մյուս կողմեն՝ ըստ կաթողիկոս Գևորգ Զ-ի կողմէ երեք Մեծերուն ուղղած պահանջիքի մը՝ ան կպահանջե վերադառնորդ «Թուրքի կողմէ բռնագրավված հողերուն և հատուցում այն պատմական մեծ անարդա-

րության համար, որ գործուած է հայ ժողովրդին հանդեպ»։

Մանոթ է թի այդ արարքը գործնական ի՞նչ հնաւանքներ ունեցավ։

Խորհրդային Միության դեսպանատուներն ու հյուպատոսարանները հրահանգ ստացան հայրենիք վերադարձնել այն բոլոր հայերը, որ կիմափաթին վերադառնալ Հյուպատոսական և մաքսային ձևակերպությունները նվազագույնին իրեցված են։

Կթի թի Անկարա գեշ աշքով կդիտե այս զանգվածային գաղթը, հայտնապես՝ Թուրքիա ի վիճակի չէ ատոր ընդիմանալու Սուլրիո և Լիբանանի մեջ պաշտոնական ոչ մեկ հակաղղեցություն կմատնանշվի տակավին։

Հարդ կա՝ կրկնելու թի պետք է մեծ համարանքով մը ողջունել ցեղային այս ընդարձակ շարժումը, որ բաց աստի, կհարուցաննե շարք մը հարակից հարցեր։ Հուսանը միայն, որ անիկա կարենա ամենուրեք կատարվի առանց բախումներու, վասնզի հայերը, որոնք կերթան, պետք չէ մոռնան, թի իրենց ետին ահտի ձգեն համայնքները, որոնք կոչված են ապրելու ասպնջական ժողովուրդներուն միջև, որոնք ընդունած են զիրենք։

Փետք է մանավանդ ինսամափիլ գաղափարաբնական ընույթ մը տալե այս տեղափոխությանց, որոնք ուզվի կամ ոչ, կդիպչին մեծ և փոքր տերությանց զաներուն։

Հայերը, ինչպես դժբախտության մեջ իրենց եղբայրները՝ հրեաները, պետք է ավելի քան երեք հետևեն երեմիա մարգարեին հոչակավոր հանձնարարության Բարելունի աքսորականներուն։ «Աղոթեցե՛ք խաղաղությանը համար թագավորության ուռ հաստատած պիտի ոլլամ զձեզ։ Վասնզի իր խաղաղությունը ձե՛ր խաղաղությունն է»։

Այս հոգվածին եղրակացությունը պարզ պիտի ոլլամ պետք է դարմանել անհամար անարդարությունները, որոնց զոհ է եղած հայ առգը անգան երկար ժամանակ և կրտահ ենք, թի նոր թուրքիան իր օժանդակությունը պիտի բեր աւ անհրաժեշտ գործին։ Անիկա պետք է կարենա մեծնալ և բարձրանալ իր նախահարերուն հողին վրա։

Այս զույգ նշանակետը պետք է միշտ ներկա ըլլա մտքին մեջ պատմխանատու մարդոց, որոնք հոս և այլուր առաքելությունը ունին Հայաստանը առաջնորդելու վերածնունդի համբուն մեջ։

ԺԱՆ ԼՅՈՒԿՈՒ

(«Առաւօտ» նույնվ. 1 1946 թ.)